

Կազմված է՝ 25.05.2021թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինլայթ» հանրային

հետազոտությունների կենտրոն
հասարակական կազմակերպության

V հերթական համագումարի

որոշմամբ՝ 25.05.2021թ.

Նախագահ՝



ՏՊԱԳՐՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց պետական ռեգիստրի

կողմից 20.05.2016թ.

Գրանցման N 211.171.910379

Վկայական՝ 03Ա1060379

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 00154189

10.10.2018թ. գրանցված Կանոնադրության

թիվ 001-2 փոփոխությունը գրանցված է

ՀՀ իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալության կողմից

« 24 » _____ 06 _____ 2021 թ.

30/05/2021 / Ի. Կարապետյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԼԱՅԹ» ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և (կամ) քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ Ֆիզիկական անձ) և իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի հասարակական կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպության անդամները պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների համար, իսկ Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:

1.3. Կազմակերպության անվանումն է՝

«Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպություն, կարճ անվանումը՝ «Ինլայթ» ՀԿ:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Սահմանադրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին, ՀՀ օրենսդրությանը, սույն կանոնադրությանը (այսուհետ՝ Կանոնադրություն), Կազմակերպության ներքին կանոնակարգին (այսուհետ՝ Կանոնակարգ), Կազմակերպության աշխատակարգին (այսուհետ՝ Աշխատակարգ), Կազմակերպության արարողակարգին (այսուհետ՝ Արարողակարգ) համապատասխան:

1.5. Կանոնադրության և Կանոնակարգի դրույթների միջև հակասության դեպքում գործում է Կանոնադրությունը:

1.6. Կազմակերպության գործունեությունը հիմնված է օրինականության, խտրականության բացառման, անդամների շահերի ընդհանրության, անդամների կամավորության, բարեխղճության, ինքնակառավարման, հաշվետվողականության, իրավահավասարության, հրապարակայնության, համահավասարության, փոխգործակցության, նախանձախնդրության և անդամների՝ իրենց կարծիքն ազատ արտահայտելու սկզբունքների վրա:

1.7. Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում: Կազմակերպությունը կարող է գործել այլ երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:

1.8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Դավթաշեն 1-ին թաղամաս, 52 շենք, բն.9:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Կազմակերպության նպատակներն ու խնդիրներն են՝

2.1.1. հանրային քաղաքականության, տնտեսության, մշակույթի, ռազմական ու տեխնոլոգիական և այլ բնագավառների համալիր կամ թիրախային հետազոտությունների իրականացում, հանրային և պետական ոլորտների կայացման ռազմավարության մշակում և գործառնական աջակցություն,

- 2.1.2. հանրային ֆունկցիոնալ մտքի կազմակերպում, հանրային շահառու կողմերի միջև հաղորդակցության կազմակերպում, ինտելեկտուալ առկա ներուժի նյութականացում՝ ի սպաս պետական և հանրային շահի,
- 2.1.3. ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենքներով ամրագրված մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանություն, ՀՀ-ում ժողովրդավարության, դրա հիմքերի և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդում, ինչպես նաև աջակցություն պետական ինստիտուտների կայացման, դրանց դերի ու նշանակության վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորման գործընթացին:
- 2.2. Կազմակերպության գործունեությունը՝
- 2.2.1. Հայաստանի Հանրապետությունում հիմնադրույթային վերափոխումների հայեցակարգերի ձևավորում և մշակում, համակողմանի հետազոտություններով, խորհրդատվությամբ և հանրային իրազեկման միջոցառումներով քաղաքացիների ու պետական կառավարման համակարգի միջև երկխոսության ծավալման գործընթացի օժանդակում՝ առավել շահավետ ու արդյունավետ փոխգործակցության ապահովման նպատակով,
- 2.2.2. տարաբնույթ ծրագրերի, այդ թվում՝ դասընթացների, դասախոսությունների, սեմինարների, գործնական պարապմունքների, հանդիպումների և այլ միջոցառումների կազմակերպում, կրթական, հրապարակախոսական, վերլուծական, հետազոտական նախագծերի իրականացում, ինչպես նաև գիտական, վերլուծական, լրատվական, տեղեկատվական նյութերի հրապարակում և տարածում,
- 2.2.3. ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդում և քաղաքացիական նախաձեռնությունների աջակցում՝ համատեղ նախագծերի իրականացման և փորձի փոխանակման միջոցով:
- 2.3. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, կազմակերպություններ, ակումբներ, ծառայություններ, զանգվածային տեղեկատվության միջոցներ, շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպություններ ու գրասենյակներ ՀՀ-ում և արտասահմանում:
- 2.4. Կազմակերպությունը համագործակցում է ՀՀ պետական մարմինների և հաստատությունների հետ, հաստատում և խորացնում է կապերը ՀՀ և օտարերկրյա պետությունների և կազմակերպությունների հետ՝ մասնակցելով համատեղ ծրագրերի, կարող է անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին:
- 2.5. Կազմակերպությունը պաշտպանում է իր անդամների՝ Կազմակերպության շրջանակներում իրականացրած գործունեության հետ կապված շահերը:
- 2.6. Կազմակերպությունը կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐԿԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ ՀՀ, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, ով ցանկանում է մասնակցել վերջինիս գործունեությանը և անցել է փորձաշրջան համապատասխան ընթացակարգով, ընդունում է Կանոնադրությունը, Կանոնակարգը և Աշխատակարգը:
- 3.2. Մինչև տասնչորս տարեկան անձը Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա:
- 3.3. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:
- 3.4. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը դիմում է ներկայացնում՝ լրացնելով Կազմակերպության կողմից մշակված դիմումի ձևաթուղթը, որից հետո Կազմակերպության Նախագահի (այսուհետ՝ Նախագահ) դրական եզրակացության դեպքում թեկնածուն անցնում է փորձաշրջան: Փորձաշրջանի ավարտին թեկնածուին տրվում է անդամի կարգավիճակ, կամ դիմումը մերժվում է:
- 3.5. Յուրաքանչյուր անդամ իրավունք ունի դուրս գալու Կազմակերպությունից իր ցանկությամբ՝ գրավոր դիմում ներկայացնելով Նախագահին:
- 3.6. Անդամը զրկվում է իր կարգավիճակից, եթե թույլ է տալիս ՀՀ օրենսդրության, Կանոնադրության, Կանոնակարգի, Աշխատակարգի, իր պայմանագրի, Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Համագումար), Կազմակերպության Կանոնադրական մարմինների՝ (այսուհետ՝ Կանոնադրական մարմիններ) Նախագահի, Կազմակերպության փոխնախագահի (այսուհետ՝ Փոխնախագահ), Կազմակերպության Խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ), Կազմակերպության վերստուգողի (այսուհետ՝ Վերստուգող), Կազմակերպության վերաքննիչի (այսուհետ՝ Վերաքննիչ) և իր վերադասի որոշումների խախտում:
- 3.7. Կազմակերպությանն անդամագրման և անդամակցությունից զրկման գործընթացների մանրամասները կարգավորվում են Կանոնակարգով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
- 4.1.1. Կազմակերպության Կանոնադրությամբ և Կանոնակարգով սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կանոնադրական մարմիններում,
 - 4.1.1.ա. Յուրաքանչյուր անդամ կարող է միաժամանակ առաջադրվել և ընտրվել միայն մեկ Կանոնադրական մարմնում:
 - 4.1.2. ներկա լինելու Համագումարին, ինչպես նաև Կանոնադրական մարմինների նիստերին սահմանված կարգով,
 - 4.1.3. Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով Համագումարին և Կանոնադրական մարմիններին ներկայացնելու դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,
 - 4.1.4. Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության Կանոնադրության

փոփոխությունների, Կանոնադրական մարմինների կազմած արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու դրանց ֆինանսական հաշվետվությունների, աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենները, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

- 4.1.5. Կազմակերպության Կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով օգտվելու նրա ծառայություններից,
 - 4.1.6. Կազմակերպությունից ստանալու իրավական օգնություն Կազմակերպության հետ կապված իր օրինական շահերի պաշտպանության նպատակով,
 - 4.1.7. մասնակցելու Կազմակերպության կողմից կազմակերպվող միջոցառումներին՝ դրանց կազմակերպման ընթացակարգին ու ձևին համապատասխան,
 - 4.1.8. Կազմակերպության կողմից Կանոնադրությանը հակասող գործունեություն իրականացնելու դեպքում բողոքարկելու Վերստուգողին, Վերաքննիչին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով,
 - 4.1.9. ազատորեն դուրս գալու Կազմակերպությունից:
- 4.2. Մինչև տասնութ տարեկան անդամները օգտվում են Կազմակերպության անդամին վերապահված բոլոր իրավունքներից և կրում են նույն պարտականությունները, բացառությամբ Կանոնադրական մարմնի անդամ ընտրվելու իրավունքից:
- 4.3. Համագումարի և Կանոնադրական մարմնի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության կամ դրա անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Դիմումը կարող է ներկայացվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:
- 4.4. Կազմակերպության անդամը պարտավոր է.
- 4.4.1. հոգ տանել Կազմակերպության հեղինակության բարձրացման ու դրա պահպանման մասին,
 - 4.4.2. կատարել Կանոնադրության, Կանոնակարգի, Աշխատակարգի, Ռազմավարության, Արարողակարգի պահանջները, Համագումարի, Կանոնադրական մարմինների և իր վերադասի որոշումները,
 - 4.4.3. մուծել անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում. վերջինիս ձևը, չափը և վճարման կարգը սահմանում է Խորհուրդը,
 - 4.4.4. բարեխղճորեն կատարել իր՝ պայմանագրով սահմանված կետերը, պարտականություններն ու իրեն տրված հանձնարարությունները:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 5.1. Կազմակերպությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում իր պետական գրանցման պահից սկսած:
- 5.2. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, կարող է ունենալ ինքնուրույն հաշվեկշիռներ, հայերեն, անգլերեն, ռուսերեն անվանումներով կնիք, դրոշմ, ձևաթուղթ,

բանկային հաշվարկային հաշիվներ՝ ՀՀ և օտարերկրյա արժույթով, կարող է իր անունից ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, հանդես գալ դատարանում որպես հայցվոր և/կամ պատասխանող:

5.3. Կազմակերպության խորհրդանիշն ունի ստորև պատկերում տրված տեսքը: Այն բաղկացած է հետևյալ մասերից՝

- մանուշակագույն երանգով ռոմբաձև շրջանակ ձախ կողմում, որը պարունակում է կայծակի տարբերանշան սպիտակ երանգով,
- լատինատառ «enlight» բառ՝ մանուշակագույն երանգով աջ կողմում,
- լատինատառ «dare to think» արտահայտություն՝ մոխրագույն երանգով ներքևի ձախ հատվածում:



5.4. Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.5. Կազմակերպությունն իր՝ Կանոնադրությամբ, Կանոնակարգով, Աշխատակարգով և Ռազմավարությամբ սահմանված նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով, իրավունք ունի.

- 5.5.1. իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,
- 5.5.2. բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,
- 5.5.3. ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակիցը,
- 5.5.4. ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,
- 5.5.5. տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին,
- 5.5.6. կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ,
- 5.5.7. օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և աշխատակիցների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- 5.5.8. իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն՝ իր Կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալու դրա մասնակիցը,
- 5.5.9. օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերելու, վարձակալելու և օգտագործելու անշարժ, շարժական և օրենքով չարգելված այլ գույք,

- 5.5.10. օտարելու, ինչպես նաև վարձակալությամբ կամ անվճար օգտագործման տրամադրելու Կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք,
- 5.5.11. կնքելու օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ,
- 5.5.12. ինքնուրույն կազմավորելու և տնօրինելու իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, ՀՀ-ում և այլ պետություններում ստանալու վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով,
- 5.5.13. համագործակցելու այլ կազմակերպությունների հետ, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,
- 5.5.14. իրականացնելու օրենքով չարգելված այլ գործունեություն:
- 5.6. Կազմակերպությունը պարտավոր է.
- 5.6.1. վարել իր անդամների և աշխատակիցների հաշվառումը,
- 5.6.2. օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի,
- 5.6.3. պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն),
- 5.6.4. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,
- 5.6.5. Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության Կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերին, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը:
- 5.6.6. Կազմակերպության Կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում, օրենքով սահմանված կարգով, դիմել Գործակալությանը,
- 5.6.7. ապահովել իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները հրապարակայնությունը,

- 5.6.8. ցանկացած մարմնի կողմից որոշում կայացնելու դեպքում, ի դեմ այդ մարմնի, ապահովել բոլոր անդամների և աշխատակիցների իրազեկվածությունը այդ որոշմանը վերաբերող մասով,
- 5.6.9. կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Կազմակերպության գերագույն ղեկավար մարմինը Կազմակերպության բոլոր անդամների կամ նրանց կողմից ընտրված պատվիրակների Համագումարն է:

6.1.1. Համագումարը հրավիրում և վարում է Նախագահը՝ բացառությամբ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

6.2. Հերթական Համագումարը հրավիրվում է առնվազն տարին մեկ անգամ՝ մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

6.2.1. Նախագահը որոշում է հերթական համագումարի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև Համագումարի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան հինգ օր առաջ պատվիրված նամակով, էլեկտրոնային եղանակով, զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և Կանոնադրական մարմիններին:

6.2.2. Եթե Կազմակերպության անդամների թվաքանակն անցնում է հարյուրի սահմանը, ապա, Կանոնակարգում սահմանված կարգով, Համագումարը կարող է անցկացվել անդամների կողմից ընտրված պատվիրակների մասնակցությամբ:

6.3. Արտահերթ Համագումար հրավիրվում է Նախագահի, Կազմակերպության անդամների մեկ երրորդի, Վերստուգողի կամ Խորհրդի բոլոր անդամների պահանջով՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

6.3.1. Արտահերթ Համագումարի վարողին որոշում է հրավիրող կողմը:

6.4. Համագումարի բացառիկ իրավասության հարցերն են.

6.4.1. կատարել Կանոնադրությունում փոփոխություններ, լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատել Կանոնադրությունը,

6.4.2. ստեղծել այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունել այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին,

6.4.3. որոշումներ ընդունել Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,

6.4.4. հաստատել Կազմակերպության կառուցվածքը,

6.4.5. ընտրել և պաշտոնանկ անել Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին,

6.4.6. ընտրել և պաշտոնից ազատել Փոխնախագահին,

6.4.7. որոշումներ ընդունել Կազմակերպության Կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման)

կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին,

6.4.8. Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանել վարձատրության կարգը և պայմանները,

6.4.9. ընտրել Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

6.4.10. հաստատել Կազմակերպության ռազմավարությունը,

6.4.11. տարին մեկ անգամ հաստատել գործադիր մարմնի կողմից ներկայացվող՝ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,

6.4.12. դադարեցնել Կանոնադրական մարմինների իրավական ակտերի պահանջներին և Կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,

6.4.13. ընդունել որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,

6.4.14. ընդունել որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին՝ բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,

6.4.15. կատարել Կանոնակարգում փոփոխություններ, լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատել Կանոնակարգը,

6.4.16. իրականացնել օրենքով, Կանոնադրությամբ, Կանոնակարգով կամ Աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

6.5. Համագումարը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների երկու երրորդից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են ժողովին ներկա անդամների կամ պատվիրակների ձայների բացարձակ մեծամասնությամբ (քվեարկության իրավունք ունեցողների մեծամասնություն):

6.6. Խորհուրդը ձևավորվում է Համագումարի կողմից անցկացվող ընտրությունների արդյունքում՝ մեկ տարի ժամկետով:

6.7. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի ձևով, որոնք հրավիրվում, կազմակերպվում և վարվում են Խորհրդի քարտուղարի կողմից ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ անգամ: Նախագահի մասնակցությունը Խորհրդի նիստերին պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում է Նախագահի իմպիչմենտի հարցը: Իմպիչմենտի գործընթացի պարագայում Նախագահին ուղարկվում է ծանուցվում:

6.7.1. Խորհրդի նիստերը ընթանում են փակ: Նախագահի և Փոխնախագահի մասնակցությունը նիստերին թույլատրվում է: Խորհրդի անդամների որոշմամբ նիստին կարող են ներկա լինել նաև այլ անձինք:

6.8. Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Խորհրդի քարտուղարի, Նախագահի, ինչպես նաև Կազմակերպության անդամների քսան տոկոսի, Խորհրդի անդամների, Վերստուգողի կամ Վերաքննիչի պահանջով հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Արտահերթ նիստին մասնակցության իրավունք է ունենում նաև դրա հրավիրման պահանջով հանդես եկած կողմը:

6.9. Խորհուրդը՝

- 6.9.1. առաջարկություններ է ներկայացնում Համագումարին նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,
 - 6.9.2. մշակում և Նախագահի հաստատմամբ Համագումարին է ներկայացնում Կանոնադրության և Կանոնակարգի նոր տարբերակների նախագծեր և հոդվածների փոփոխությունների առաջարկություններ,
 - 6.9.3. սահմանում է Կազմակերպության մուտքի վճարն ու անդամավճարը, չափն ու վճարման կարգը,
 - 6.9.4. լիազորում է Նախագահին ձեռք բերել, տիրապետել, օգտագործել, տնօրինել, օտարել և դուրս գրել Կազմակերպության՝ քսան միլիոն դրամը գերազանցող արժողությամբ ցանկացած տեսակի գույք,
 - 6.9.5. ստեղծում և լուծարում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումները, մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և բաժինները,
 - 6.9.6. Կանոնակարգում նշված ձևով շնորհում է Կազմակերպության անդամի կարգավիճակ կամ զրկում դրանից,
 - 6.9.7. փոփոխություններ է կատարում Կազմակերպության Աշխատակարգում, Ռազմավարության և Արարողակարգի մեջ և մշակում է այդ փաստաթղթերի նոր տարբերակները:
 - 6.9.8. իրականացնում է օրենքով, Կանոնադրությամբ, Կանոնակարգով, Աշխատակարգով, Համագումարի և Կանոնադրական մարմինների որոշումներով իրեն վերապահված այլ լիազորություններ:
- 6.10. Նախագահի հետ անհաղթահարելի տարաձայնությունների պարագայում բոլոր անդամների կողմ լինելու դեպքում Խորհրդի պահանջով հրավիրվում է Համագումար ու քննարկման դրվում Նախագահի իմպիչմենտի (պաշտոնանկության) հարցը: Այս նախաձեռնությունը կոչվում է Իմպիչմենտի մեկնարկ:
- 6.10.1. Համագումարի կողմից Իմպիչմենտին կողմ որոշման դեպքում Նախագահը զրկվում է իր զբաղեցրած պաշտոնից:
 - 6.10.2. Համագումարի կողմից Իմպիչմենտին դեմ որոշման դեպքում Խորհրդի լիազորությունները դադարեցվում են, անցկացվում են Խորհրդի արտահերթ ընտրություններ:
 - 6.10.3. Արտահերթ ընտրությունների միջոցով ընտրված Խորհուրդը համարվում է ժամանակավոր, այն կրում է Խորհրդի բոլոր լիազորությունները մինչև նախորդ գումարման Խորհրդի լիազորությունների նախատեսված ավարտը: Կանոնադրությամբ ու Կանոնակարգով սահմանված դեպքերում բոլոր արտահերթ ընտրություններում ձևավորված մարմինների հանդեպ կիրառվում է միևնույն կարգավորումը:
- 6.11. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե ներկա են Խորհրդի բոլոր անդամները: Խորհրդի որոշումներն ընդունվում են միաձայն:
- 6.12. Նախագահը ընտրվում է Համագումարի կողմից՝ երկու տարի ժամկետով:
- 6.13. Նախագահը Կանոնադրությանը, Կանոնակարգին, Աշխատակարգին, Համագումարի և Կանոնադրական մարմինների որոշումներին համապատասխան՝
- 6.13.1. ապահովում է Համագումարի և Կանոնադրական մարմինների որոշումների կատարումը,

- 6.13.2. տնօրինում և կառավարում է գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները (մինչև քսան միլիոն ՀՀ դրամ արժուողությամբ գույքը՝ միանձնյա, իսկ քսան միլիոն ՀՀ դրամը գերազանցող արժուողությամբ գույքը՝ խորհրդի որոշմամբ), գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,
- 6.13.3. ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- 6.13.4. տալիս է լիազորագրեր,
- 6.13.5. բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
- 6.13.6. իր իրավասության սահմաններում արձակում է գործադիր հրամաններ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 6.13.7. հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,
- 6.13.8. հաստատում է Կանոնադրության և Կանոնակարգի նոր տարբերակների նախագծերը և հոդվածների փոփոխությունների առաջարկությունները Համագումարին ներկայացնելու խորհրդի նախաձեռնությունը, հաստատում է Կազմակերպության Աշխատակարգը, Արարողակարգը, գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
- 6.13.9. հաստատում է Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք յուրաքանչյուր տարի ներկայացնում է Համագումարի հաստատմանը,
- 6.13.10. առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից,
- 6.13.11. իրականացնում է Կազմակերպության ղեկավարումը,
- 6.13.12. վարում է Կազմակերպության մարմինների (բացառությամբ խորհրդի) նիստերը կամ նշանակում է վարողներին, հաստատում է դրանց օրակարգերը,
- 6.13.13. ընդունում և աշխատանքից ազատում է Կազմակերպության անդամներին և աշխատակիցներին,
- 6.13.14. նշանակում է Կազմակերպության անդամներին և աշխատակիցներին՝ ըստ աշխատանքային հաստիքների, և ազատում դրանցից,
- 6.13.15. սահմանում է Կազմակերպության Կանոնադրական մարմիններում ընդգրկված անձանց և Կազմակերպության աշխատակիցների վարձատրության չափերն ու կարգը,
- 6.13.16. Կազմակերպության անդամների և աշխատակիցների նկատմամբ կիրառում է օրենքով և Կանոնակարգով նախատեսված խրախուսանքի և տույժի միջոցներ,
- 6.13.17. իրավունք ունի Համագումարին քվեարկության դնելու Վերստուգողի և Վերաքննիչի պաշտոնակության հարցը: Դրական եզրակացության դեպքում արտահերթ ընտրությունների միջոցով ընտրվում է համապատասխան Կանոնադրական ժամանակավոր մարմին:

- 6.13.18. իրավունք ունի իր՝ ժամանակավոր բացակայության կամ պարտականությունների կատարման ժամանակավոր անհնարինության դեպքում Փոխնախագահին Կազմակերպության Նախագահի պաշտոնակատար նշանակելու ոչ ավել, քան մեկ ամիս ժամկետով,
- 6.13.19. պատասխանատու է Կանոնադրության, Կանոնակարգի, Աշխատակարգի, Արարողակարգի, Ռազմավարության դրույթների իրագործման ու դրանց բնօրինակների պահպանության համար,
- 6.13.20. պատասխանատու է կազմակերպչական ու վարչարարական հարցերի արդյունավետ լուծման, կարգապահական նորմերի, հանդուրժողականության մթնոլորտի պահպանման, խոսքի ազատության ապահովման, փաստաթղթային տնտեսության վիճակի համար,
- 6.13.21. իրականացնում է օրենքով, Կանոնադրությամբ, Կանոնակարգով, Աշխատակարգով, Համագումարի և Կանոնադրական մարմինների որոշումներով իրեն վերապահված այլ լիազորություններ:
- 6.14. Փոխնախագահը ստանձնում է Կազմակերպության ղեկավարումը Նախագահի հրաժարականի, պաշտոնանկության կամ լիազորությունների կատարման անհնարինության դեպքում՝ Կանոնակարգում նշված ձևով:
- 6.15 Փոխնախագահը առաջադրվում և ընտրվում է Նախագահի հետ միասին, մեկ քվեաթերթիկով, մինևույն ժամանակահատվածով:
- 6.16. Վերստուգողը Կազմակերպության ինքնավերահսկման, ներքին վերստուգման (աուդիտի) համար պատասխանատու ընտրովի պաշտոնյան է:
- 6.17. Վերստուգողը ընտրվում է Համագումարի կողմից մեկ տարի ժամկետով, որոշումները ընդունում է միանձնյա:
- 6.18. Վերստուգողը եզրակացություն է տալիս Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման ու հաշվետվությունների վերաբերյալ, որոնք ներկայացվում են Համագումարի հաստատմանը:
- 6.19. Վերստուգողը իրավասու է՝
- 6.19.1. տարին մեկ անցկացնելու Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,
 - 6.19.2. ծանոթանալու Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և գրավոր կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու դրա մարմիններին, որոնց վերաբերյալ համապատասխան մարմինները պարտավոր են յոթ օրվա ընթացքում ներկայացնել գրավոր պատասխաններ,
 - 6.19.3. պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ,
 - 6.19.4. իրականացնելու Կանոնադրությամբ և/կամ Համագումարի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:
- 6.20. Վերստուգողը «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվությանը կից ներկայացնում է եզրակացություն, որն առնվազն պարունակում է տվյալներ՝
- 6.20.1. Կազմակերպության գույքի և դրա ստացման աղբյուրների,

6.20.2. Կազմակերպության իրականացրած ծրագրերի և դրանց արդյունավետության,

6.20.3. ծրագրերի իրականացման ընթացքում ծախսված միջոցների վերաբերյալ:

6.21. Վերաքննիչը Կազմակերպության Կանոնադրական մարմինների միջև հավասարակշռության ու զսպման մեխանիզմների ամրապնդման, անդամների ու աշխատակիցների իրավունքների պաշտպանության և Կազմակերպության այլ Կանոնադրական մարմինների որոշումների բողոքարկման, քննության և վճռաբեկման Կանոնադրական մարմին է:

6.22. Վերաքննիչի կողմից քննության մեկնարկի համար հարկավոր է դիմումի առկայություն: Վերաքննիչը՝ որպես Կանոնադրական մարմին, չի կարող դիմում ներկայացնել ինքն իրեն:

6.23. Կազմակերպության յուրաքանչյուր անդամ, աշխատակից կամ Կանոնադրական մարմին կարող է դիմում ներկայացնել Վերաքննիչին, եթե նա համարում է, որ՝

6.23.1. Կանոնադրական մարմինների կողմից ընդունվել են որոշումներ, որոնք խախտել են իր իրավունքները,

6.23.2. Կանոնադրական մարմինների կողմից ընդունվել են որոշումներ, որոնք հակասում են ՀՀ օրենսդրությանը, Կանոնադրությանը կամ Կանոնակարգին,

6.23.3. Կանոնադրական մարմինների կողմից ընդունվել են որոշումներ, որոնք ակնհայտ հակասում են Կազմակերպության գաղափարներին, սկզբունքներին կամ նպատակներին:

6.24. Վերաքննիչը որոշումները ընդունում է ինքնուրույն՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, Կանոնադրությամբ, Կանոնակարգով, Աշխատակարգով, Համագումարի և Կանոնադրական մարմինների որոշումներով: Վերաքննիչը հրապարակում է կոնկրետ դիմումով կայացված յուրաքանչյուր որոշում:

6.25. Վերաքննիչը անհրաժեշտության դեպքում կարող է Կազմակերպության Կանոնադրական մարմիններից, անդամներից և աշխատողներից պահանջել ու ստանալ Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալ և հաշվետվություն:

6.26. Վերաքննիչ կարող է լինել միայն մասնագիտությամբ իրավաբան անդամը:

6.27. Վերաքննիչն ընտրվում է Համագումարի կողմից մեկ տարի ժամկետով:

6.28. Վերաքննիչը իր աշխատանքներն իրականացնում է Կանոնակարգում սահմանված ընթացակարգով, որոշումներ է ընդունում միանձնյա:

6.29. Վերաքննիչը ունի դիմումներին արձագանքելու, դրանց մասին Կանոնադրությամբ, Կանոնակարգով և Աշխատակարգով սահմանված դեպքերում բոլորի համար պարտադիր ուժ ունեցող որոշումներ կայացնելու և ճգնաժամային իրավիճակներում, Կանոնադրությամբ և Կանոնակարգով սահմանված դեպքերում, առաջարկություններով հանդես գալու իրավասություն:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության գույքը Կազմակերպության սեփականությունն է:

7.2. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը դրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

7.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներն են Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները, բանկային հիմնարկներից ստացված վարկերը, դրամաշնորհները, բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները, հովանավորներից (տեղական և օտարերկրյա) ստացված գումարները, Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

7.4. Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

7.5. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒՃԱՐՈՒՄԸ, ԼՈՒՃԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

8.1. Կազմակերպության վերակազմակերպումն ու լուծարումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Համագումարի կամ դատարանի որոշմամբ: Այդ դեպքում Համագումարը կազմավորում է լուծարային հանձնաժողով և, օրենքով սահմանված կարգով, սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

8.2. Կազմակերպության լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովը, օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց և պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո, մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման նպատակով: Դրա անհնարինության դեպքում այն փոխանցվում է պետական բյուջե: